

«21» հունվար 2020թ.

No 02 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ, ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ,  
ԴԵՂԱԲՈՒՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ  
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ, ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆԸ, ՄԱԿՆՇՄԱՆԸ,  
ՆԵՐԴԻՐ ԹԵՐԹԻԿԻՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ ԵՎ ԴԵՂԵՐԻ  
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴԵՂԻ ՓԱԹԵԹԻ  
ՎՐԱ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՇՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
16-րդ հոդվածի 8-րդ մասը, 20-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ մասերը և 21-րդ հոդվածի  
8-րդ մասը

Հրամայում եմ՝

1. Սահմանել, որ

- 1) Դեղերի փաթեթավորումը, պիտակավորումը, մակնշումը, այդ թվում պարտադիր  
նշման ենթակա օժանդակ նյութերը պետք է համապատասխանեն Եվրասիական  
տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 76  
որոշմամբ հաստատված պահանջներին,
- 2) Դեղերի ներդիր-թերթիկը և ընդհանուր բնութագիրը պետք է  
համապատասխանեն Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2016թ.  
նոյեմբերի 3-ի N 88 որոշմամբ հաստատված պահանջներին,
- 3) Դեղերի անվանումները պետք է համապատասխանեն Եվրասիական  
տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի հունվարի 29-ի N 2  
երաշխավորությամբ հաստատված «Դեղերի առևտրային անվանումների  
ընտրության ձեռնարկ»-ին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2019թ. ապրիլի 23-ի N 13 երաշխավորությամբ հաստատված «Դեղերի խմբային  
անվանումների կազմման կանոններ»-ին:

4) Դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի փաթեթավորումը, պիտակավորումն ու մակնշումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի հունիսի 14-ի N 32-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի պատշաճ արտադրական գործունեության կանոններին համապատասխան:

2.Սահմանել դեղատանը պատրաստվող դեղերի փաթեթավորմանը և պիտակավորմանը ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

3.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ԴԵՂԱՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԴԵՂԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ ԵՎ  
ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Դեղատանը անհատական դեղատոմսերով պատրաստված դեղերը պիտակավորվում են դեղաձևին համապատասխան՝ պիտակի վրա ներառելով հայերեն լեզվով հետևյալ գրառումները՝.

- 1) Դեղատնային գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, լիցենզիայի համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը
- 2) պացիենտի անունը, ազգանունը, իսկ ներհիվանդանոցային դեղատանը պատրաստված դեղերի պիտակի վրա նաև դեղը պատվիրող բաժանմունքի անվանումը
- 3) դեղի բաղադրությունը
- 4) օգտագործման եղանակը (օրինակ՝ ներքին, արտաքին) կամ դեղաձևը (օրինակ՝ ակնակաթիլ, քսուք )
- 5) պատրաստման ամսաթիվը
- 6) պիտանիության ժամկետը
- 7) դեղաձևին համապատասխան նախազգուշական գրառումները.
  - ա) հեղուկ դեղախառնուրդների դեպքում «պահել զով և լույսից պաշտպանված տեղում», «օգտագործելուց առաջ թափահարել»
  - բ) քսուքների, ակնաքսուքների և ակնակաթիլների դեպքում «պահել զով և լույսից պաշտպանված տեղում»
  - գ) ներքին օգտագործման կաթիլների դեպքում «պահել լույսից պաշտպանված տեղում»
  - դ) բոլոր պիտակների վրա՝ «պահել երեխաներին անհասանելի տեղում»
- 8) օգտագործման ձևի մանրամասն նկարագրությունը.
  - ա) հեղուկ դեղախառնուրդների համար՝ «...-ական գդալ, օրական ... անգամ, ուտելուց ... ...»
  - բ) ներքին օգտագործման կաթիլների համար՝ «...-ական կաթիլ, օրական ... անգամ, ուտելուց ... ...»
  - գ) ներքին օգտագործման դեղափոշիների համար՝ «...- ական փաթեթ, օրական ... անգամ, ուտելուց ... ...»
  - դ) ակնակաթիլների համար՝ «...-ական կաթիլ, օրական ... անգամ »,
  - ե) արտաքին օգտագործման կաթիլների համար՝ «...- ական կաթիլ, օրական ... անգամ»:

2. Ներդեղատնային պատրաստումների պիտակների վրա սույն պահանջների 1-ին կետի 2-րդ ենթակետի փոխարեն նշվում է սերիայի համարը: